ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)/06310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 25-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.12.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել Գեղանիստ համայնքի 16.12.2020 թվականի Թիվ 07 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Գեղանիստ համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին
2. 2021 թվականի համայնքի ղեկավարի վարձատվության չափի սահմանման,համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 26-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 1 ին մասի 18- րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9- րդ, 10- րդ , 11- րդ ,12- րդ , 13 –րդ , 14- րդ հոդվածների պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնքում 2021 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝**7500**(յոթ հազար հինգ հարյուր)դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

15 000 (տասնհինգհազար) դրամ, .

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

25 000 (քսանհինգ հազար) դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

30 000(երեսուն հազար) դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

50 000(հիսուն հազար) դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500** (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝**2500**(երկու հազար հինգ հարյուր) դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝**1500**(մեկ հազար հինգ հարյուր) դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝**2500** (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**100 000** (մեկ հարյուր հազար) դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**30000** (երեսուն հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**25000**(քսանհինգ հազար) դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000** (երեք հազար) դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5500** (հինգ հազար հինգ հարյուր) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7000**(յոթ հազար)դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**10 500** (տաս հազար հինգ հարյուր) դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**22 500** (քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**50 000** (հիսուն հազար) դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000** (երեք հազար) դրամ..

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5500** (հինգ հազար հինգ հարյուր) դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում**7000** (յոթ հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10 500**(տաս հազար հինգ հարյուր) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22 500** (քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

50 000 (հիսուն հազար) դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝**175** (մեկ հարյուր յոթանասունհինգ)դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝25 000 (քսանհինգ հազար)դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50 000**(հիսուն հազար)դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝**200 000** (երկու հարյուր հազար) դրամ,

դ. խաղատների համար՝**500 000** (հինգ հարյուր հազար) դրամ,

ե. շահումով խաղերի համար՝**250 000** (երկու հարյուր հիսուն հազար) դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ **75 000** (յոթանասունհինգ հազար) դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000** (երկու հազար) դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000**(չորս հազար) դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**7500** (յոթ հազար հինգ հարյուր) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

10 000(տաս հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

15 000(տասնհինգ հազար) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝

25 000 (քսանհինգ հազար) դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500** (հինգ հարյուր)դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000**(մեկ հազար) դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000**(երկու հազար) դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**4000**(չորս հազար) դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500** (յոթ հազար հինգ հարյուր) դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **12500**(տասներկու հազար հինգ հարյուր) դրամ.

11) Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝**1000** (մեկ հազար) դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝**1750**(մեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ **0** (զրո) դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **750** (յոթ հարյուր հիսուն) դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **375** (երեք հարյուր յոթանասունհինգ)

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **75** /յոթանասունհինգ/ դրամ.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**50 000**(հիսուն հազար) դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝**5000** (հինգ հազար) դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

250 000(երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար 25000 / քսանհինգ հազար / << դրամ.

16) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 10000 / տասը հազար/<< դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 50000/ հիսուն հազար / << դրամ:

2. Սույն որոշմամբ սահմանված դրույքաչափերին կիրառվել է 0,5 գործակիցը:

3.Հայաստանի Հանրապետության Գեղանիստ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետեւյալ տեսակները և դրույքաչափերը՝

ա/ Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետկապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 /հինգ հազար/ դրամ

բ/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդթվում՝ դրանց
վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձեւակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահ մանել՝ 5000 /հինգ հազար/դրամ

գ/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձեւակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 /հինգ հազար/ դրամ

դ/ Համայնքի տնօրինության եւ օգտագործման ներքո գտնվող հողերը
հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում
փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 /երեք հազար/դրամ

ե/ Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների եւ աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2000 /երկու հազար/ դրամ

զ/ համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/ երեք հազար / << դրամ.

4. Համայնքի տարածքում աղաբահանության վճար սահմանել՝

ա/ Առևտրի/ այդ թվում շուկաների/ հանրային սննդի և բնակչություն սպասարկման այլ ծառայություններ – 25 /քսանհինգ / դրամ 1քմ:

բ/ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ – 15/տասհինգ/ դրամ 1քմ:

գ/ Կրթական , մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ – 3 / երեք/ դրամ 1ք:

դ/ վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 /տասնհինգ/ դրամ.

ե/ Փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչից 100 /մեկ հարյուր/դրամ:

զ/ գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3/ երեք / << դրամ, .

է/արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 / հինգ / << դրամ.

4.1 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 / հիսուն հազար / << դրամ:

4.2 . Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 4 -րդ ենթակետի 4.1 պարբերության 1

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝3/ երեք հազար/ << դրամ, կամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10/ տասը հազար /<< դրամ.

5. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝500 /հինգ հարյուր/դրամ փոխհատուցման վճար :

6.Սահմանել համայնքի ենթակա կազմակերպություններում ծնողական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

ա/ համայնքային ենթակայության **մանկապարտեզի** ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝**5000** դրամ

ա.Գեղանիստ համայնքի երեխաների համար 1 ամսվա համար 5000դրամ
բ. Հարևան համայնքներից Գեղանիստի մանկապարտեզ հաճախող 1 երեխայի համար ծնողական գումարի ամսեկան վարձի չափը սահմանել 8000 դրամ:

7. Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվոզ վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝

Կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - **500**դրամ,
Ծննդօգնություն ա/ թեթև միջամտություն -**1000** դրամ,
բ/ ծանր միջամտություն - **5000**դրամ,
Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից / բացառությամբ<<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ -**100** դրամ /
մանր կենդանի, **200** դրամ / խոշոր կենդանի/.
Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - **200** դրամ:
Ախտահանություն - 1 քմ. մետր **200**դրամ,
Միջատազերծում - 1 քմ. մետր **100**դրամ,
Կրծողների ոչնչացում - 1քմ. մետր **200**դրամ,
Արհեստական Սերմնավորում - **5000**դրամ,
Կենդանու հերձում - **1000**դրամ /մանր կենդանի/
3000դրամ / մեծ կենդանի/,
Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելություն - **1000**դրամ
Կենդանիների նախասպանդային զննում - **1000**դրամ /
մանր կենդանի/,
2000դրամ / մեծ կենդանի,
Կենդանիների հետսպանդային զննում - **1000**դրամ /մանր կենդանի,
2000 դրամ / խոշոր կենդանի/:

8) համայնքի տարածքում բոլոր հարկ վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ

Համայնքի ղեկավար՝ **Վաչիկ Ադիլխանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 27-Ն

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ղեկավարի վարձատվության չափը 300 000 դրամ

Հաստատել Գեղանիստի համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1 դրույք 211 000 դրամ
Համայնքի ղեկավարի տեղակալ ՝ 1 դրույք 160 000 դրամ
Համայնքի ղեկավարի խորհրդական և մշակույթի տան տնօրեն՝ 1 դրույք 212 000 դրամ
Աշխատակազմի քարտուղար՝ 1 դրույք 230 000 դրամ
Գլխավոր մասնագետ՝ 1 դրույք 210 000 դրամ
Առաջատար մասնագետ՝ 1 դրույք 185 000 դրամ
1-ին կարգի մասնագետ՝ 1 դրույք 170 000 դրամ
2-րդ կարգի մասնագետ՝ 1 դրույք 167 000 դրամ

Տեխնիկական անձնակազմ՝

Օպերատոր՝ 1 դրույք 130 000 դրամ
Պահակ՝ 1.5 դրույք 123 000 դրամ
Հավաքարար՝ 1 դրույք 97 000 դրամ

Սպասարկող անձնակազմ՝

Անասնաբույժ 0,25 դրույք 22 000 դրամ

Ընդամենը 2 217 000 դրամ, 13 հաստիքային միավոր:

Հաստատել մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը 19 ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,18,75 հաստիքային միավոր:Խմբերի թիվ 4, ծնողական գումարը՝Գեղանիստ գյուղի երեխաների համար՝5000 դրամ,այլ համայնքներից եկած երեխաների համար 8000 դրամ,

1.Տնօրեն՝ 1 դրույք 170 000 դրամ
2, Մեթոդիստ,ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ 1 դրույք 150 000 դրամ
3.Դաստիարակ՝ 4 դրույք 420 000 դրամ
4.Դաստիարակի օգնական՝ 4 դրույք 365 104 դրամ
5.Հաշվապահ,դերձակ,լվացարար ՝ 1 դրույք 91 276 դրամ
6.Խոհարար՝ 1 դրույք 91 276 դրամ
7. Խոհարարի օգնական՝ 1 դրույք 91 276 դրամ
8.Տնտեսվար,օժանդակ բանվոր՝ 1 դրույք 91 276 դրամ
9.Դռնապահ,բակապահ՝ 1 դրույք 88 312 դրամ
10. Գիշերային պահակ՝1 դրույք 88 312 դրամ
11.Երաժշտություն դաստիարակ՝ 1 դրույք 91 276դրամ
12.Փականագործ,հավաքարար՝1 դրույք 88 312 դրամ
13.Բուժքույր՝ 0.75 դրույք 91 276 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
4. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՍԱ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան